11.09.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 10-ի N 1517 - Ն որոշման

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

1. Սույն հավելվածը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով սնանկության գործով պարտատիրոջ (այսուհետ՝ պարտատեր)՝ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցության դեպքերը:

2. Պարտատերը ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը իր մասնակցության իրավունքը հաստատում է սույն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգով:

3. Պարտատերն իրավունք ունի մասնակցելու ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը սնանկության այն վարույթում, որով՝

1) ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող այլ պարտատեր առկա չէ կամ

2) ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող բոլոր պարտատերերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերեր են:

4. Պարտատերն իրավունք ունի մասնակցելու նաև ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը սնանկության այն վարույթում, որով՝

1) պարտապանը համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին՝

ա. հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձ է,

բ. որպես ոչ առևտրային կազմակերպության հիմնադիր հանդես է եկել Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ կազմակերպության կազմակերպաիրավական ձևից,

գ. 10 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպություն է.

2) պարտապանը սնանկ ճանաչվելուն նախորդող երեք օրացուցային տարիներից որևէ հաշվետու տարվա վերջի դրությամբ ցուցաբերել է հետևյալ ցուցանիշներից մեկը՝

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը գերազանցել է 10 միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,

բ. գործունեությունից հասույթը գերազանցել է 20 միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի սահմանած կարգով հաշվարկված՝ աշխատողների միջին տարեկան թիվը գերազանցել է 250-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ